

անոր գլուխը կովկասէն մինչեւ Պրուսա: Թաթարը գիտէ նաեւ ո՛չ միայն ջորեպան խրիմեանը, այլև կաթողիկոս խրիմեանը, իր ոստիկանին սուտ ու փուտ նկարագրականներէն, աւելի քիչ դերովը, զոր այդ անունը ունեցաւ հարկահաւաքի պատանութեան օրերուն, թուրք հանրային կարծիքին մէջ, իբրեւ հայոց թագաւորացու...: Ու նման ամէն պաշտօնեայի, անիկա իր գոյութեան իմաստը կ'ընդունի, պետութեան սպասարկութեան մէջ դնելով կատաղի եռանդ, փատիշահին, կրօնքին, հայրենիքին ուղուրիւն, այն ամէն բաներէն, որոնցմով թրքութիւնը օր մը պիտի կանչուի իր պապերուն կայսրութիւնը վերականգնելու: Այս ամէնը մտքիս մէջ կը դառնան ու կը դառնան: Գեղապետին տղուն հասակը կը գծուի պատուհանէն: Դուրսն է: Պիտի երթանք խօսելու, դպրոցէն ետք, ինչպէս որոշած ենք իրիկուրնէ: Այդ երեւումը կը փորձեմ շահագործել:

- Բարեկամ, - կը ձայնեմ կամաց:

Տրիբունը, իր խօսքի թափին մէջ, ատեն չունի շշուկներով զբաղելու: Տեսած է, իր կարգին, պատուհանէն ամբարձիկ պատկերը քաղքենի տարագով երիտասարդին:

- Բարեկամ, - կը ձայնեմ աւելի ամուր, - քիչ մը դուրս կրնա՞ք գալ:

- Կարի՞ք:

- Ստիպողական:

- Որ էտպէս է, է՛ս ըոպէիս:

Ու դառնալով շուրջիններուն.

- Կը շարունակենք էլի այս շատ շահեկան խօսակցութիւնը:

Անոր մանրիկ, ճկուն մարմինը չունի դժուարութիւն ինքզինքը ազատելու գիւղացիներու հանգոյցէն: Փախչիլը չէ ասիկա, ոչ ալ սպրդիլը, այլ հալածական երէի վարժութիւն մը, տեղ մը ճարելու, սեղմելու, կծկուելու մշտական հարկէն մարզանք մը արագութեամբ ու քիչնալով հաւասարապէս ուշագրաւ: Կը դիտեմ սա